ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 346

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքը (Լեռնապար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Ծաղկահովիտ համայնքի (Լեռնապար բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքը (Լեռնապար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-11 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի (Լեռնապար բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-049-0001-0032 կադաստրային ծածկագրով 0.012 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր	02-049-0001-0032 կադաստրային ծածկագրով 0.012 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կապի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Լեռնապար բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի (Լեռնապար բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «30» «օգոստոսի» 2024 թ.